

ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՅԻ՝ ԳՈՂՁԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Ա. Յ. ՄԻՍՈՆՅԱՆ

1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին պարտություն կրելով Ջանգեզուրի դեմ քաջամ բոլոր ճակատներում՝ Նախիջևանում մնացած օսմանյան ուժերը և տեղի մուսավաթական ավազակախմբերը իրենց վրիժառական կրքերին հագուրդ տալու համար հաշվեհարդար սկսեցին մնացած հայության բեկորների հետ: 1920 թ. հունվարի կեսերին տեղեկանալով, որ հայկական ուժերի մեծ մասը Գարեգին ՆՇՂԵՅԻ գլխավորությամբ կենտրոնացել է Շուտնուխի գործողության վրա և քաջ գիտակցելով, որ գործնականում ՆՇՂԵՅԻ համար անհնար է լինելու իր ուժերը Ուրտանի աջ ափից արագորեն նետել Օրդուբադի դեմ, այնտեղի թուրք զինվորականությունը Էդիֆ բեյի գլխավորությամբ նախապատրաստվում էր նոր ոճրագործությունների Գողթանի հայության նկատմամբ¹:

ՆՇՂԵՅԻ հանգիստ չուներ: Նա մտածում էր օր առաջ Գողթանին օգնության հասնելու մասին: Սակայն խստաշունչ ձմռան բուրքը փակել էր Գողթան տանող միակ ճանապարհը, որն անցնում էր մոտ 12.853 ոտնաչափ բարձրություն ունեցող Կապուտջուղ լեռան վրայով: Սյունյաց աշխարհի և Նախիջևանի միջև գտնվող Գողթանն աշխարհագրական և բնակլիմայական առումով առանձնահատուկ դիրք էր գրավում: Գավառակի վերին հատվածում՝ հատկապես Կապուտջուղի ստորոտներում, ձմեռը խստաշունչ էր, երկարատև: Անգամ սեպտեմբերի վերջերին և գարնան սկզբի երկու ամիսներին ձյուն էր մտած լինում: Այնպես որ տարվա մեջ մոտ ութ ամիս Գողթանն առանձնացված էր Ջանգեզուրից, և լեռնանցքի անանցելիության պատճառով գողթանցին այդ պահին փաստորեն մնացել էր մեն-մենակ դաժան ճակատագրի հանդեպ²:

Ջանգեզուրի զինված ուժերի հրամանատար գեմ. Ն. Ղազարյանին (Գորիս) ուղղված մի գրության մեջ ՆՇՂԵՅԻն այսպես էր նկարագրում գողթանցիների ահավոր վիճակը. «Հաղորդում եմ Ձերդ գերազանցության, որ մի քանի օր ևս՝ և Գողթանի տեղ մենք կունենանք մի հսկայական գերեզմանատուն: Հրեշավոր չափերի հասած սովն սկսել է իր ավերածությունը: Օր չէ անցնում, որ յուրաքանչյուր գյուղում սովամահ չլինեն 15-20 հոգի: Ժողովուրդը կերակրվում է շների և կատուների մսով, մի բան, որից առաջացել են մի շարք տարափոխիկ հիվանդություններ, որոնք լրացնում են սովի կատարած հունձը:

¹ Տե՛ս Գարեգին ՆՇՂԵՅԻ, Հայ - բուլղարական կռիվները, Երկեր, հատոր երկրորդ, Եր., 2002, էջ 41, Վ. Առաքելյան, ՆՇՂԵՅԻ, Եր., 1989, էջ 21, Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «ղաշնակիցները» (1918 թ. դեկտ.- 1920 թ. ապրիլ), Եր., 2002, էջ 223:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1, Գարեգին ՆՇՂԵՅԻ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, Երկեր, հատոր երկրորդ, էջ 55, Վ. Գեղորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919 - 1921), Եր., 1991, էջ 44, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 357, Է. Ջոհրաբյան, նշվ. աշխ., էջ 223, 231-232:

«Հացի հետ վաղուց ի վեր սպառված են բոլոր տեսակի փոխանյութերը (суппораты)»³:

Սովից ու թուրքի սպառնալիքից իրենց կյանքը փրկելու համար գողթանցիներին շատերը, այնուամենայնիվ, փորձում էին ձմռան կեսին բարձրանալ Կապուտջուղ և լեռնանցքով անցնել Ջանգեզուր: Բայց, ավա՜ղ, նրանցից քչերին էր հաջողվում հաղթահարել ճանապարհը: Կապուտջուղի երկու լանջերին ընկած էին կանանց ու ծերերի բազմաթիվ դիակներ⁴:

Գողթանի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանը Կապարգողթի հրամանատար Նժդեհին գրում էր. «Ժողովրդի դրուքյունը ուղղակի ողբերգական է ... Գողթանին պահողը ներկա մոմենտում միայն Ղափուջուղն է: Այդ հսկան հենց որ մի քիչ հնաբավորություն տա անասուններ անցկացնելու, Գողթանում ոչ մի մարդ չի մնա:

Մարդիկ պարզ ասում են. «Գողթանը մեզ պետք չէ»: ... Ժողովուրդը մեռնում է սովից: Նա անընդունակ է դառել դիմագրավելու քջամառ ամենաթեթև գրոհին»⁵:

Այնուհետև իր նամակում Մելիք-Մուսյանը շեշտում էր, որ եթե Հայաստանի Հանրապետության համար Գողթանը ռազմավարական ու քաղաքական կարևորություն ունի, ապա ինքը կարող է օգնության ձեռք մեկնել և գողթանցիներին պահել տեղում⁶:

Երևանը, սակայն, հաշտվել էր Գողթանի կորստի հետ: Այդ մասին Գողթանում արդեն գիտեին: Ի՞նչ էր մնում անելու գողթանցիներին՝ կովել կամ գաղթել: Նրանք, որքան էլ դժնդակ էր իրենց վիճակը, վճռում են կովել⁷: Թեև իրենց հույսն արդեն կտրել էին Երևանից, բայց դեռ օգնություն ստանալու հույս էին փայփայում Գողթանի իշխանություններից, թեև վերջինս դեռևս լուր էր⁸, իսկ Ջանգեզուրի ազգային խորհրդի անդամներից ոմանք, հատկապես Նիկոլայ Հովսեփյանը, լիովին համամիտ էին Նժդեհի տեսակետի հետ, այն է՝ Կապարգողթի ուժերը պիտի հարձակում գործեն Օրդուբադի ուղղությամբ և փրկեն Գողթանի ժողովրդին:

«Հայկական լեռնաշխարհի ինքնապաշտպանության գործով զբաղվողներու համար, - գրում էր Վարդան Գեորգյանը, - պարզ էր Ջանգեզուրի և Ղարաբաղի վերապահումը դրութիւնը, եթե Գողթան յուսահատած գաղթէր՝ մշտական սպառնալիքի պիտի մատնուէր նորակազմ Հայ Հանրապետութիւնը»⁹:

Բախտորոշ վճիռ կայացնելու համար այդ օրերին տեղի ունեցավ Գողթանի հայության հերթական համագումարը, որը որոշում ընդունեց՝ կովել, եթե Ջանգեզուրը օգնության ձեռք մեկնի¹⁰: Համագումարից հետո Գողթանի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանը Կապարգողթի ընդհանուր հրամանատար Նժդեհին գրում է.

³ ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, ք. 1, ֆ. 4047, ց. 2, գ. 41, ք. 5, տե՛ս նաև **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 55, նույնի՝ Նամակներ, գրություններ, հեռագրեր, Երկեր, հատոր երկրորդ, էջ 284, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 44:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 22, ք. 4, **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 55, 60, նույնի՝ Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 288, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 45, Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 21, Է. Չոհրաբյան, նշվ. աշխ., էջ 223:

⁵ **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 55-56, տե՛ս նաև Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 45:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս «Նժդեհ, կեանքն ու գործունեութիւնը, նշխարներ, վկայութիւններ», Լոս Անջելես, 1989, էջ 90:

⁸ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 57:

⁹ Տե՛ս Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 45:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, ք. 2-ի շրջերես, **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 56, 57, նույնի՝ Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 283, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 45, «Նժդեհ, կեանքն ու գործունեութիւնը, նշխարներ, վկայութիւններ», էջ 90:

«Մենք վճռել ենք մեռնել հայրենի լեռներում: Մենք մեր ձեռքով կկոտորենք մեր որդիներին, քույրերին, հայրերին ու մայրերին, որպեսզի շան մման սովից չսատկեն. իսկ տղամարդիկ կկռվեն մինչև վերջին շունը»¹¹:

Ահա այդպիսին էր հայոց հայրենիքի՝ կործանման եզրին կանգնած բանկազին մի կտորի ահավոր պատկերը:

1920 թ. փետրվարի 10-ին, երբ Նոյեմբեր Աշոտ Մելիք-Մուսյանի հետ գտնվում էր Քաջարանում, նրանց ներկայացան 200-ից ավելի գողթանցիներ, որոնք նոր էին հաղթահարել Կապուտջուղի լեռնանցքը և հասել Ղափանի շրջան: Նոյեմբեր և Մելիք-Մուսյանը նրանց առաջարկեցին վերադառնալ, բայց սովից ոսկրացած այդ ուրվականները լաց ու կոծով խնդրեցին հետ չուղարկել: Միայն այն բանից հետո, երբ Նոյեմբեր խոստացավ, որ մեկ շաբաթից՝ մինչև փետրվարի 18-ը, իր վաշտերով անցնելու է Գողթան, գաղթականները համաձայնեցին վերադառնալ¹²:

Պարզ է, որ ոչ մի ուժ, բացի Կապարգողթի վաշտերից, ի վիճակի չէր փրկելու Գողթանը: Ուստի Նոյեմբեր իր առաջնահերթ խնդիրը համարեց Գողթանի հայտնիության պաշտպանությունը:

Գաղթականների հետ հանդիպման հաջորդ օրը՝ 1920 թ. փետրվարի 11-ին, Նոյեմբեր գրություն է ուղարկում Գորիսի հրամանատարությանը՝ տեղեկացնելով, որ Գողթանի ռազմական ուժերի հրամանատարն իրեն գրավոր հայտնել է, թե այնտեղի հուսալքված և քաղցած ժողովուրդը սպասում է պարզ եղանակի, որպեսզի գաղթի Չանգեզուր: Այդ տառապյալ ժողովուրդը, գրում էր նա, իր երկիրը դարձրել է իր Գողթան՝ հանուն Չանգեզուրի պաշտպանության, և այժմ ուժ անգամ չունի իր կյանքը փրկելու համար: «Կրկնում են՝ մի քանի օր ևս - և պարտաճանաչ ու մարտնչող Գողթանը, մեր Հանրապետության այդ Բեյզիան*, որը երկրորդ տարին է, ինչ հավատարիմ պահակի պես, ամենադժնակ պայմաններում պաշտպանում է Չանգեզուրի նախադուռը, կրկնվելի և կը կորչի ընդմիշտ:

Ձերդ գերազանցություն, Չանգեզուրի կատարյալ փրկության ձգտողը նախ պիտ մտածէ Գողթանի մասին, որի մի բուռն ժողովուրդը, այլևս առանց դրսի օգնական ուժերի, չի կարող մնալ Ղափուջուղից այն կողմը:

Այս անգամ էլ ինձ և պրն. Աշոտին հաջողվեց մի կերպ խափանել Գողթանի մասսայական գաղթը, որն այնքան կատաստրոֆային պիտ լիներ Չանգեզուրի համար:

Տվածս խոսքը գողթանցիներին դրժել չեմ կարող: (Դա ոճիր և դավաճանություն կ'լիներ):

Գնում են, եթե չկարողացա փրկել դրությունը՝ պատվով կմեռնեմ սովի և թըշմամու դեմ կռվող ժողովրդի հետ:

Որոշել են մինչև ամսիս 18-ը 300 հոգով անցնելու Ղափուջուղը, որի համար և խնդրում են Ձերդ Գերազանցության անմիջական կարգադրությունը՝ Գորիսի ռազմամթերանոցից բաց թողնել Գողթան անցնող զորամասիս համար 80.000 եռազճանի փամփուշտ ու հարկավոր քանակությամբ կենսամթերք և շորեղեն»¹³:

¹¹ Գարեգին Նոյեմբեր, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 56, տե՛ս նաև Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 45, «Նոյեմբեր, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 90:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1, «Նոյեմբեր, Նամակներ, գրություններ, հեռագրեր», էջ 284, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 46, «Նոյեմբեր, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 91:

* Նկատի ունենալ այն, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում Բեյզիան պաշտպանական վահան էր Ֆրանսիայի համար:

¹³ ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 21, թ. 1 և շրջերես, ֆ. 4047, ց. 2, գ. 41, թ. 5, «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1993, թիվ 1-2 (95-96), էջ 174-175, Գարեգին Նոյեմբեր, Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 284-285, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 45-46, տե՛ս նաև «Նոյեմբեր, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 91-92:

Այս գրությունը Գորիս ուղարկելուց մեկ օր հետո, հակառակ այնտեղի հրամանատարության շարունակվող տատանումներին, Նժդեիը փետրվարի 12-ին ժամը 7-ին հրաման է ուղղում իր զորքին:

«Ձիմակիցներ,- նշում էր նա,- հասել է օրը, անօրինակ հերոսությամբ ավելի քան երկու տարի ամենադժմակ պայմաններում Ջանգեղուրի նախադուռը պաշտպանող այն մի բոտն ժողովրդի փրկության օրը, այն քաջամուն ժողովրդի, որն ամիսներ առաջ, խորապես գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակությունը, բացճակատ հայտնեց մեզ իր որոշումը՝ «Գողթանը կը մեռնի՛, բայց չի՛ գաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր հայրերի՝ Աստվածաշունչ Քրիստափորի և Ռոստոմի արյունաներկ ու սրբապղծված ծննդավայրը՝ երբեմնի չղքնաղ Ագուլիսները պիտ վերագրավվեն, պիտ վերականգնվեն իրենց շենությամբ ու բարոյական մեծությամբ»:

Այնուհետև Նժդեին իր վաշտերին դիմեց հետևյալ սրտառույ կոչով. «Լսե՛ք, հնչել է ժամը, զիմակիցներ, երբ վախկոտ Էդիֆների* տմարդ սրից զարնված հազարավոր անթաղ մեռելները ձեզնից արդար ու արյունոտ հատուցումն են պահանջում:

Լսե՛ք, և հարյուրավոր գերված ու լլկված հայ կանանց, որոնք ձեր գոռ արշավի և ուռաների սպասումով, ձեզ հերոսության են կանչում:

Լսե՛ք, և ինձ, ձեր ղեկավարին, որը ձեզնից ծուխ, բշնամու գյուղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք և պատմական Որոտանի ափերում, և Գեղվա ձորերում:

Լսե՛ք, իմ քաջ ու հայրենանվեր զիմակիցներ, լսե՛ք, լցվե՛ք բոցով ու վրեժով, առե՛ք զենքերդ ու առա՛ջ: Առա՛ջ, մեզ հետ են Աստված և մեծ հայրերի՝ Քրիստափորի և Ռոստոմի անհանգիստ հոգիները: Առա՛ջ»¹⁴:

Նժդեիի մարտիկները քաջ գիտեին, որ տարվա այդ ժամանակ դեպի Գողթան անցում կատարելը կապված է մեծագույն ղժվարությունների հետ, նաև՝ խիստ վտանգավոր: Բայց հրամանատարի բոցավառ խոսքերով հմայված դափանցի և գեներալների քաջերի համար կյանքից ավելի գերադասելի եղավ բշնամու սրի տակ գտնվող ազգակիցների փրկությունը: Նրանք ոտքի ելան առանց վարանումի, մեկ մարդու պես:

Մարտի 8-ին Ղափանի և Գեներալի ուժերի մի մասը համախմբվեց Բաղաբերդում: Այստեղ Ղափանի ժողովրդի անունից զորքին հանձնվեց սպիտակ կտավից մի դրոշակ, որի մի կողմի վրա գրված էր «Ղափանը Գողթանի համար», իսկ մյուս կողմի վրա՝ «Պատանակրաց արշավանք»: Պատանակրաց ... Մարդիկ իրենց եղբայրների փրկության համար պատրաստ էին մեռնելու, ուստի նրանցից ամեն մեկը մարմնի վրա կրում էր պատան: Նժդեին անչափ հուզված էր հայրենապաշտ հերոս ժողովրդի վերաբերմունքից: Ջինվորներն իրենց սերը հայրենիքի և նվիրվածությունը լեզենդ դարձած հրամանատարի նկատմամբ արտահայտում էին խանդավառ ցույցերով¹⁵:

Բաղաբերդում հավաքված իր զինվորների առաջ ունեցած ելույթներից մեկում, վկայակոչելով ղափանցիների նվիրած դրոշակը, Նժդեիը ասում է.

* Նկատի ունի Նախիջևանում մնացած օսմանյան ուժերի հրամանատար Էդիֆ բեյին և նրա զիմակիցներին:

¹⁴ Գարեգին Նժդեի, Հրամաններ, կոչեր, Երկեր, հատոր երկրորդ, էջ 416, տե՛ս նաև Վ. Գեորգիան, նշվ. աշխ., էջ 47-48, «Նժդեի, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 92-93, «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1993, թիվ 1-2 (95-96), էջ 175-176:

¹⁵ Տե՛ս Գարեգին Նժդեի, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 58, Վ. Գեորգիան, նշվ. աշխ., էջ 48, Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 22:

«Մենք մեզ հետ տանում ենք մի պատան: Հաջողության դեպքում կը հազց-
նենք թշնամուն: Մտնելու դեպքում՝ մեզ կը հազցնեն»¹⁶:

Եթե Ղափանում և Գեմվազում ժողովուրդը, զորքը և ղեկավարությունը դեպի
Գողթան արշավանք կատարելու հարցում միակամ էին, զողված նժողեհյան ան-
կոտորում կամքով, ապա Գորիսում՝ Չանգեզուրի ազգային խորհրդում և հրամա-
նատարության մեջ, հետզհետե մեծանում էր արշավանքն աննպատակահարմար
համարողների թիվը:

Արշավանքի նախապատրաստությունը վերջանալու վրա էր, երբ մարտի 9-ի
երեկոյան Նժդեհը Գորիսից գոր. Ղազարյանից ստացավ հետևյալ հրամանը.
«Հետաձգել Գողթանի օպերացիան: Մեր հակահետախուզության տված տեղե-
կություններից երևում է, որ Ջիբրայիլ-Կարյազիմի շրջաններում երևացել են Նու-
րի փաշան և գեներալ Մեհմանդարովը: Աղբբեջանը պատրաստություններ է տես-
նում մեծ ուժերով մի քանի կետերից հարձակվելու Չանգեզուրի վրա»¹⁷:

Գորիսից եկած հրամանը Նժդեհն ընդունեց զայրույթով: Ինչպե՞ս կարող էր
հետաձգել օպերացիան. դրա մասին մա մտածել անգամ չէր ուզում՝ համարելով,
որ այդ դեպքում ինքը դավաճանած կլինի իր և իր բանակի նվիրական երդմանը,
հուսախաբ արած սպասվող վտանգներն արհամարհող, հավանական մահը մո-
ռացած և թշնամուն հաղթելու մոլեռանդ ցանկությանը առեցուն իր քաջակորով
զինվորներին¹⁸:

Նույն գիշերվա ժամը 1-ին Կապարզողթի հրամանատարը հետևյալ պա-
տասխանն է գրում զոր. Ղազարյանին. «Ձեր տված տեղեկություններից հետո
Գողթանի արշավանքն ինձ համար դառնում է ավելի իմաստալից և անհետաձգե-
լի: Հենց այս գիշեր Քաջարանում հավաքված զորքը իմ ղեկավարությամբ շարժ-
վելու է առաջ»¹⁹:

Միաժամանակ Նժդեհը նամակ է ուղղում Երևան Հ. Յ. Դ. Արևելյան բյուրո-
յին, ուր նշվում էր. «Այսօր էլ, երբ հրեշավոր չափերի հասած սովի և թշնամու գե-
րադաս ուժերի դեմ մարտնչող Գողթանի մի բուռ ժողովուրդը «զաղթ կամ կոխվ» է
պահանջում, նրանք, որոնք չ'խեցին ինձ և պատճառ դարձան Ազուլիսների կոտո-
րածին՝ թեթև սրտով պատասխանում են՝ «Հրամայված չէ մեզ ... Առանց Երևանի
թույլտվության չենք կարող, պատասխանատվության հարց կա» և այլն:

Չանձրացնելու չափ դիմումներ են արել, խնդրել, սպառնացել, որ կ'հեռանամ
Չանգեզուրից, եթե թույլ չտան ինձ գրավելու Օրդուբադն ու Բարթազը, բայց միշտ
էլ հազար անհիմն պատճառաբանություններով արգելել են ինձ:

Եվ Գողթանը ավելի քան երկու տարի հավատարիմ պահակի պես ամենա-
դժնդակ պայմաններում Չանգեզուրի ամրություններն ու նախադուռը պաշտպա-
նող Գողթանը՝ աչքերը Ղափուջուղի բարձունքներին հառած սպասում է, անվերջ
սպասում»²⁰:

¹⁶ Նույն տեղում, ինչպես նաև՝ Ռ. Համբարձումեան, Վարք Նժդեհի, ասոյթներ, Եր., 2001, էջ 60:

¹⁷ Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 49, տե՛ս նաև Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաս-
տանի գոյամարտից, էջ 58, Մտնել, Գարեգին Նժդեհը Չանգեզուրում, «Հայրենիք» ամ-
սագիր, 1963, յունուար, թիվ 1, էջ 20:

¹⁸ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 58, Մուլլի՝ Իմ
պատասխանը, Երկեր, հատոր երկրորդ, էջ 205, Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 21, 22, Ռ.
Համբարձումեան, նշվ. աշխ., էջ 60:

¹⁹ Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 59, Վ. Գեորգեան,
նշվ. աշխ., էջ 49:

²⁰ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2 և շրջերես, Գարեգին Նժդեհ, Նամակներ, գրություն-
ներ, հեռագրեր, էջ 283:

Մարտի 9-ի լույս 10-ի գիշերը Նժդեհը արձակում է Կապուցոչուղի լեռնանցքը անցնելու հրաման:

1920 թ. մարտի 10-ի առավոտյան սկսվում է Գողթանի արշավանքը²¹:

Հետագայում Նժդեհը գրել է. «... Մահաշունչ ձմեռվա կեսին, երբ քաղցած ու քափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձյուները, մեղմացրինք բնության արհավիրքը, բուքն ու բորանը և Գողթան իջանք ...»²²:

Մարտի 15-ին գորքը կենտրոնանում է Բիստ գյուղում²³: Նույն օրվա երեկոյան Նժդեհը թիվ 25 հրամանն է իջեցնում Կապարգողթի ռազմական ուժերին: Հրամանի սկզբնամասում, դիմելով իր գորքին, նա նշում էր, որ արդեն երկու տարի է, ինչ թշնամին անվերջ հարձակումներ է գործում Չանգեզուրի նախադուռը պաշտպանող մի բուռ գողթանցիների վրա, որպեսզի տեր դառնա նրա հայրենի երկրամասին: Այդ նպատակն իրականացնելու դեպքում մուսուլմանական երկու երկրները՝ Ադրբեջանն ու Տաճկաստանը, տարածքներով կմիանան իրար: Այն բանից հետո, երբ տեղահանվեց Տանակերտը, թշնամին այնուհետև «աննախընթաց բարբարոսությամբ սրի և հրի մատնեց Գողթանի կուլտուրական փառքը կազմող Ագուլխների ուղղամիտ ազգաբնակչությունը»: Չնայած այդ անդառնալի կորուստներին, այնուհետև ասված էր հրամանի մեջ, Գողթանը իր կողմն է քաշել Նախիջևանի և Օրդուբադի շրջանների բովանդակ ուժերին ու, այդպիսով, ցայսօր ապահովել Չանգեզուրի անվտանգությունը: Եվ ահա այժմ, մշտական հարձակումներից ջլատված, գողթանցի հայերը իրենց վերջին համագումարում որոշել են՝ «կոխվ կամ գաղթ»:

«Խորապես գիտակցելով Գողթանի ռազմագիտական խորը նշանակությունը, - շարունակում էր Նժդեհը, - զնահատելով նրա՝ Չանգեզուրի համար կատարած դերը և նկատի առնելով նրա արդի աննախընթաց կրիտիկական դրությունը, հրամայում են Ղափզենգողթի* ռազմական կամավոր ուժերին մի շարք մուսուլման գյուղերի տեղահանությամբ ու այրումով հայկական Գողթանի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարավորություն՝ շարունակելու իր գոյությունը հայրենի երկրում»²⁴:

Այնուհետև հրամանում Նժդեհը տալիս էր Կապարգողթի ուժերի տեղաբաշխումը, նշում նրանց թվաքանակը և զինական հնարավորությունները: Իսկ հրամանի երկրորդ մասի բնօրինակը նպատակահարմար ենք գտնում ներկայացնել ամբողջությամբ.

1 Ագայի գորասյուն

[Հրամանատար] պարուշիկ

Թաղևոսյան

Հետևակ 150

Հեծելազոր 7

Գրավել Խարաբագիլան բերդը և Այգայի (Ագայի - Ա. Ս.) կարևոր դիրքերը՝ անդամալուծելու Յայջիից և Նախիջևանից Օրդուբադին օգնության հասցնելու բոլոր փորձերը, կտրելով թշնամու

²¹ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 59, Ստեմեյ, Գարեգին Նժդեհը Չանգեզուրում, էջ 20, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 93, 428, Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 22:

²² Գարեգին Նժդեհ, Հրամաններ, կոչեր, էջ 417, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 93:

²³ Տե՛ս Վ. Գեղորգեան, նշվ. աշխ., էջ 49, Ստեմեյ, Գարեգին Նժդեհը Չանգեզուրում, էջ 20, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 96:

* Ղափզենգողթ - Կապան + Գենվազ (Մեղրի) + Գողթան-ի կրճատ ձևը:

²⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 1, թ. 6, ֆ. 4033, ց. 8, գ. 105, թ. 1, Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 57, նույնի՝ Հրամաններ, կոչեր, էջ 425-426, Վ. Գեղորգեան, նշվ. աշխ., էջ 46-47:

Գնդացիք 1
Ընդամենը՝ 150 հետևակ, 7 հեծյալ,
1 գնդացիք:

II Ռազմափորձային հարյուրյակ
[Հրամանատար] պրավորշչիկ
Ոսկանյան
Հետևակ 100
Հեծելագոր 4
Գնդացիք 1
Ընդ.՝ 100 հետևակ, 4 հեծելագոր,
1 գնդացիք

III Քաղաքների (Վանանդի) գորսայուն

Գողթանի ոսպանակատի հրամա-
նատար Ղազար [Քոչարյան]
Հետևակ 300
Հեծելագոր 20
Լեռնային թնդանոթ 1
Գնդացիք 2
Ընդ.՝ 300 հետևակ, 20 ձիավոր, 1
թնդանոթ և 2 գնդացիք

IV Ագուլխի գորսայուն

[Հրամանատար] պողպորուչիկ
Գյուլնազարյան
Հետևակ 200
Հեծելագոր 6
Լեռնային թնդանոթ 1
Գնդացիք 1
Ռմբածիգ 1
Ընդամ.՝ 200 հետևակ, 6 հեծյալ, 1
լեռնային թնդանոթ, 1 գնդացիք, 1
ռմբածիգ

V Կարճևանի գորսայուն

[Հրամանատար] շտաբս կապի-
տան Ամիրջանյան
Հետևակ 250
Հեծելագոր 40
Լեռնային թնդանոթ 1
Գնացիք 1
Ընդամ.՝ 250 հետևակ, 40 ձիավոր, 1
լեռնային թնդանոթ և 1 գնդացիք

VI Պահեստի ուժեր

[Հրամանատար] պորուչիկ Տեր-
Սարգսյան
Հետևակ 100

հաղորդակցությունը ինչպես շոսեով,
նույնպես և Արաքսի ափով:

Գրավելով Դոլյունը, ճնշում է Քալանթար
և Դոլյուն դիզաները, որոնց տեղահանու-
թյունից հետո մի հիսնյակը միանում է Ա-
զայի զորասյունին, իսկ մյուսը մի գնդա-
ցիքով ընդունում է դեպի ձախ և գրավում է
կարևոր կետ Դաստայի, Վանանդի և Ա-
զայի միջև խանգարելու թշնամու շար-
ժումները շոսեի վրա և Արաքսի ափով:

Դիսարը տեղահանելուց հետո վճռական
հարվածով գրավել Վանանդը, Սալը, Վա-
լավերը, Աղրինը և Դիզին (Դիզան կամ
Տիզենը - Ա. Ս.): Ամբողջ ժամանակ հաս-
տատ կապ ու կոնտակտ պաշտպանելով
իր հարևան զորասյունների հետ: Վանան-
դի և վերոհիշյալ գյուղերի անկումից հետո
զորասյունը յուր ուժերի 2/3-ը իջեցնում է
Ագուլխ և խիզախում է կապ ստեղծել
Գենվազի ուժերի հետ: Միանալուց հետո
մի հետևակային հարյուրյակ, մի գնդացի-
քով մնում է զբաղեցնելու Նուռնուսը, իսկ
Գողթանի և Գենվազի միացյալ ուժերը
գրոհում են Օրդուբադի վրա:

Արագ առաջխաղացումով գրավել Ունու-
սը և Դոմիսը՝ թողնելով անհրաժեշտ թվով
զինվորներ՝ [խափանելու] Նուռնուսին,
Դոմիսին օգնության գալու փորձերը և իջ-
նել Վերինգետ թուրքական թաղը գրավե-
լու նպատակով:

Ունենալով երկու զորասյուն՝ Օրդուբա-
դյան և Գանձայի, առաջինով գրավել
Ղափա կոչված ամրությունը և վճռակա-
նորեն հարվածել Օրդուբադը: Երկրորդով
գրավել Գանձան, առաջանալ դեպի Ա-
գուլխ՝ Գողթանի ուժերին միանալու
նպատակով:

Կատարյալ մարտական պատրաստու-
թյամբ լինել Շոր-ջրում

VII Բիւպի պահակախումբ
[Հրամանատար]՝ շտաբս կապիտան
Մատակյան
Հետևակ 100
Հեծելագոր 3
Գնդացի 1
Ընդամ.՝ 100 հետևակ, 3 հեծելագոր, 1
գնդացի:

Ուժեղացնելով Բիստ-Ալաիի և Նասիր-
վազի ճակատը և խոր հետախուզու-
թյուններով շփման մեջ մտնել Բայահ-
մատի և նրա հարևան գյուղերի հետ:

Հրամանը ավարտվում է հետևյալ հանձնարարականով. «Հրամայում են բո-
լոր զորայուններին ու զորախմբերին՝ իրենց վրա դրած մարտական խնդիրները ի-
րագործել առանձին վճռականությամբ և արագությամբ: Կոիվներին տարերային
և ահաբեկիչ բնույթ տալու համար բոլոր վաշտապետներին և զորախմբերի պետե-
րին՝ ունենալ հրձիգ տասնյակներ և գայլախմբեր: Մրանց՝ գործածել մեծ քանա-
կությամբ ուժանակ և ձեռնառումբեր»²⁵:

Մարտի 17-ին Կապարգողի գործը հասնում է Յոնա: Այստեղ է կենտրոնաց-
վում նաև պայթուցիկով տակառների խմբաքանակը²⁶:

Մարտի 19-ի երեկոյան Յոնայում կենտրոնացված գործը շարվում է, և զին-
վորները ոգեկոչում են հայ ժողովրդի ազատագրության համար ընկած նահա-
տակներին²⁷:

Մարտի 20-ի լուսադեմին տրվում է հարձակման հրամանը, և, լույսը դեռ
չբացված, Նժդեհի ուժերը գրավում են Խարաբազիլան հինավուրց բերդը, ինչպես
նաև Դոլյու, Քալանթար, Դիսար, Հանան, Վալավեր, Աղրի, Դիգա (Տիգեն), Վա-
նանդ, Դոնիս գյուղերը: Նույն օրը գործը հասնում է Օրդուբադի մախադուռը և սրի
քաշում ամբողջ պահակախումբը: Հայերի ձեռքն են անցնում նաև ռազմական բո-
լոր կարևոր կետերը²⁸:

Հաջորդ օրը՝ մարտի 21-ին, բացի Արաքսի ափին գտնվող Յայջի և Դաստակ
գյուղերից, հայերի ձեռքն են անցնում Գողթանի մնացած բոլոր թուրքաբնակ գյու-
ղերը²⁹:

Այդ օրը Նախիջևանից օգնություն է հասնում Գողթանի թուրքերին, բայց
նրանք չեն հանդգնում կովի մեջ մտնել և դաշտային թնդանոթից մի քանի արկ ար-
ձակելուց հետո նահանջում են Ջուլֆա³⁰:

Նժդեհը չէր կարող անպատիժ թողնել գլխավոր ավազակաբույնը՝ Օրդուբադը:

²⁵ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 1, ք. 6-7, ֆ. 4033, ց. 8, գ. 105, քք. 1-ի շրջերես, 2 և շրջերես, **Գա-
րեզին Նժդեհ**, Հրամաններ, կոչեր, էջ 426-428:

²⁶ Տե՛ս **Գարեզին Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի զոյամարտից, էջ 61, «Նժդեհ,
կեանքն ու զործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 97, **Վ. Առաքելյան**, նշվ.
աշխ., էջ 22:

²⁷ Տե՛ս **Գարեզին Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի զոյամարտից, էջ 61, **Վ. Գեոր-
գեան**, նշվ. աշխ., էջ 49, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22:

²⁸ Տե՛ս **Գարեզին Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի զոյամարտից, էջ 61, **Վ. Գեոր-
գեան**, նշվ. աշխ., էջ 49, **Ստեմսկ**, նշվ. աշխ., էջ 20, «Նժդեհ, կեանքն ու զործունեությունը,
նշխարներ, վկայություններ», էջ 94, **Է. Չոկրաթյան**, նշվ. աշխ., էջ 243:

²⁹ Տե՛ս **Գարեզին Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի զոյամարտից, էջ 61, **Վ. Գեոր-
գեան**, նշվ. աշխ., էջ 49, **Վ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 22, **Ռ. Համբարձումեան**, նշվ. աշխ.,
էջ 61:

³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, ք. 20-21, **Գարեզին Նժդեհ**, էջեր Լեռնահայաստանի
զոյամարտից, էջ 62, **Վ. Գեորգեան**, նշվ. աշխ., էջ 49, «Նժդեհ, կեանքն ու զործունեությու-
նը, նշխարներ, վկայություններ», էջ 98:

Ղափանի հանքերից Հ.Յ.Դ. Արևելյան բյուրոյին հղած նամակում Նժդեհը նշում էր. «... Օխչու և Գեղվա ձորերի 36 գյուղերը գրավելուց հետո, երբ Օրդուբադը տարերային պանիկայի մատնված իր հարստություններն էր փոխադրում պարսկական ափը, եթե իմ դեկտեմբերի 9-ին գրած դիմումը չմնար «ձայն բարբառոյ յանպատի»՝ այժմ մեր ձեռքին կլիներ ոչ թե միայն Օրդուբադը, այլև՝ Ջուլֆան»³¹:

Մարտի 21-ի լույս 22-ի գիշերը Նժդեհի վաշտերը Նոտոնուսի ու Կարճևանի կողմից հարձակվեցին հանցավոր քաղաքի վրա և մարտի 22-ի առավոտյան շրջապատեցին այն: Օրդուբադի բնակչությունը մատնվեց ահավոր խուճապի, շատերը փախուստի դիմեցին: Հայերը, գրավելով գերեզմանատունը, պատրաստվում էին գրոհով վերցնել քաղաքը³²:

Չանգեզուրի գեներալ կոմսար Ս. Մելիք-Յուլյանը հեռագրում էր Երևան. «Օրդուբադի շուրջ եղած ողջ տարածքը գրավված է մեր կողմից»³³:

Օրդուբադի թուրք ղեկավարներից մեկը՝ Ասքիեր խանը, որն այդ պահին գտնվում էր Ջուլֆայում, այնտեղից հեռախոսագիր է ուղարկում Թավրիզ, որում նշում է, որ Նովրուզի առաջին օրը՝ մարտի 21-ին, 10 հազար հոգուց բաղկացած հայկական ուժերը, իբր, գրավելով և այրելով թաթարական գյուղերը, հարձակվել են Օրդուբադի վրա: «Հեռախոսային հաղորդակցությունը ոչնչացված է,- հաղորդում էր նա: - Օրդուբադի կողմից լսվում են ուժեղ քնդանոթածություն ձայներ: Օրդուբադի ժողովուրդը ձեզմից օգնություն է խնդրում մուսուլմաններին ազատելու համար: Հայտնեցեք Ադրբեջանի կառավարությանը և ելրոպական պետությունների ներկայացուցիչներին ու միջոցներ ձեռք առեք պաշարված Օրդուբադը ազատելու համար»³⁴:

Ասքիեր խանի այդ հեռախոսագրին հաջորդում է դարձյալ Ջուլֆայից Թավրիզ հաղորդված երկրորդը, որտեղ ասված էր. «Հայերը գրավել են Օրդուբադ տանող բոլոր ճանապարհները: Նախիջևանից եկած՝ օգնական ուժը աշխատում է անցնել Օրդուբադ՝ Աիրարի վրայով: Շրջակա գյուղերի ազգաբնակչությունը սարսափի մատնված՝ հավաքվել է Օրդուբադում: Ուսեստեղեն չի ճարվում: Դիմեցեք պարսից կառավարությանը և օգնություն խնդրեցեք Ղարաղաղից: Օրդուբադը ոմբակոծվում է»³⁵: Այնուհետև, միտումնավոր խեղաթյուրելով իրողությունը, նա հաղորդում է, թե «երկու կողմից էլ կան մեծ կորուստներ» (այնինչ Գողթանի ողջ օպերացիայի ընթացքում հայերը տվել էին ընդամենը երեք զոհ, և վիրավորվել էր Գողթանի ուժերի հրամանատար Ղազար Քոչարյանը), որ, իբր, «ժայկական ուժերը կազմված են կանոնավոր կառավարական զորքերից, զանգեզուրցիներից, պարսկահայերից և տեղացիներից»³⁶ (իրականում Գողթանի ճակատում չկային ո՛չ երևանյան կանոնավոր զորքեր, ո՛չ պարսկահայեր):

Օրդուբադի անկումը ժամերի հարց էր, սակայն դրությունը փրկեց ոչ թե Նախիջևանից եկած ռազմական օգնությունը, այլ Ղափանից ուղարկված տազնապալի զորությունը, որը Գողթան էր հասցրել մի սուրհանդակ:

³¹ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, ք. 2, **Գարեգին Նժդեհ**, Նամակներ, գրություններ, հեռագրեր, էջ 283:

³² Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 62-63, Վ. **Գեղբեկան**, նշվ. աշխ., էջ 49:

³³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, ք. 136:

³⁴ «Միմարեթ», Թավրիզ, թիվ 13, 22 ապրիլի 1920 թ., **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 62 (տողատակ), Վ. **Գեղբեկան**, նշվ. աշխ., էջ 50, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 94, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2 (95-96), էջ 176-177:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

«Շուտ և կարևոր: Նժդեհին.

Ամսվա 23-ին սկսվեցին մեր ճակատներում կոիվները: Թշնամին մեծ ուժերով առաջանում է: Թուրքերը վերցրել են իրենց նախկին դիրքերը: Ագարակ-Ջեյվա գծի վրա եղած գյուղերի դրությունը օրհասական է ... Մեր դեմ գործում է երեք թնդանոթ՝ մեծ ուժերով: Խնդրում են շտապեք մեզ հասնելու, բերելով ձեզ հետ թարմ ուժեր:

Շտաքս -կապիտան՝ Նարինյան

25 մարտի 1920, ժամը 1, գիշեր, Ղափանի հանքեր»⁷⁷:

Երկու ժամ հետո հասնում է երկրորդ սուրհանդակը՝ այս անգամ Կապար-գողթի հրամանատարին բերելով Ղափանի ազգային խորհրդի անդամ Արսեն Բաբայանի՝ Գյուտկումից ուղարկած հետևյալ գրությունը. «Միրելի հրամանատար, մեծարգո Նժդեհ.

Քո սիրեցյալ Ղափանը ձեռքից գնում է այս գիշեր Ջեյվան հանձնել են թուրքերին: Ջեյվան ձեռքից գնալուց հետո, պարզ է, որ Մոդեսը, Ռոժանիսը, Եղվարդը և Ագարակն էլ այսօր - վաղը կ'գնան: Հրամանատարություն չկա, զինվորությունը սրտով չի կովում: Ի սեր այն նեղությունների, որ կրել ես մեր Հայրենիքի համար, հասիր մեզ: Եթե մինչև 3 օրը այստեղ չլինես քո քաջարի զինվորներով, այլևս Ղափանը կորած կը տեսնես»⁷⁸:

Հիրավի, աղբյուրագրական գորքերը խոշոր ուժերով, այդ թվում՝ 10 թնդանոթներով, հարձակում էին սկսել երեք ուղղությամբ. 1) Մինքենդի ուղղությամբ Գորիսի վրա, 2) Կեյսարի կողմից Ալիդուլիուշադի վրա՝ նպատակ ունենալով Ղափանն անջատել Չանգեզուրից, 3) Ջեբրայիլի կողմից՝ Ղափանի վրա:

Առաջին երկու ուղղություններով հակառակորդի բոլոր գրոհները հետ էին մղվել: Ղափանի ուղղությամբ Ջեբրայիլից հարձակվող աղբյուրագրական գորքերը Նուրի փաշայի ղեկավարությամբ կարողացան մեղել հայ զորամասերին, որոնք նահանջեցին շրջապատի վրա իշխող Այն-Դաղ բարձունքից, թշնամուն հանձնեցին նաև Խանաղան և Հարթիզը⁷⁹:

Ղափանի շրջանի վրա այս հարձակումը Նժդեհին ստիպեց դադարեցնել Օրդուբադի գրոհն ու գրավումը՝ մոտ ապագային թողնելով նրան հասցնելիք վճռական հարվածը:

Կապարգողթի վաշտերի՝ Գողթանից հաղթականորեն Ղափան վերադառնալուց անմիջապես հետո Նժդեհը ձեռնարկեց շրջան ներխուժած թուրքերին հակահարված տալու Ագարակ և Ջեյվա գյուղերի ուղղությամբ:

Իմանալով այդ մասին՝ Ղափանի վտանգված գյուղերի պաշտպանները ոգի առան: Նրանք վերհիշել էին դեռ Գողթանի արշավանքից առաջ Նժդեհի արձակած մարտական կոչը, որտեղ առաջ էր քաշվել Չանգեզուրի թիկունքն ապահովելու կարճ ու հստակ ծրագիրը: «Ձինվորներ, անհաշտ թշնամին մորից մեզ իր ձեռնոցն է նետել, - ասված էր այդ կոչում: - Վերցնենք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արևմտյան ուժերի խենթ հարվածներից ընկավ անառիկ Գեղվաձորը: Օրեր անց՝ ձեր նույն գեղվաձորյան թափի և կրակի առաջ պիտի ընկնի Ռոտտանի

⁷⁷ Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 63, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 50, Ստեփել, նշվ. աշխ., էջ 20, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 99:

⁷⁸ Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 63, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 51, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 99 - 100:

⁷⁹ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 63, 64 (տաղատակ), «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 94:

աջ ափը: Այնտեղ, Գեղվա բարձունքներում և ձորերում մեզ գորավիզեց Դավիթ - քեկի վրիժավառ ստվերը, այստեղ Որոտանի ճակատում, մեզ կառաջնորդի Թորոս - իշխանի հայրենամվեր հոգին: Յոթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տերը Չանգեզուրի: Ուրեմն առա՛ջ, իմ յոթն անգամ սիրած և քաջ ղափանցիներ, առա՛ջ, դեպի այդ բարձունքները՝ դեպի Քյափագ, Այինդաղ, դեպի Հարթիգ:

Մեզ հետ է Աստված և մեր պատերազմական բախտը, առա՛ջ»⁴⁰:

Եվ հիմա, երբ Նժդեհը իր ուժերով օգնության էր հասնում Ղափանի գյուղերին, դիրքերում լավում էին ուրախության խոսքեր՝ «Հրամանատարը շուտով կհասնի, նա արդեն անցել է սարը ...»⁴¹:

Մարտի 25-ին Գորիսից եկած պահեստային զորամասը և Կապարգողթի վաշտերը համատեղ մետվեցին կռվի դաշտ:

Չդիմանալով հայերի շեշտակի գոռիին՝ թուրքերը խուճապով թողեցին Ձեյվա գյուղը: Հայ զորքը ճակատային շեշտակի գրոհներով թշնամուց հետ գրավեց նաև Հարթիգի և Մուսանի բարձունքները: Կարյազիհի և Ջեբրայիլի կողմերից եկած զավթիչները քաշվեցին իրենց տեղերը: Ղափանի շրջանի վրա կախված վտանգը վերացավ⁴²:

Արդեն ասվեց, որ Նժդեհի նպատակը Ղափանի տարածքից թշնամուն քշելը չէր միայն: Նրա մտածումը շրջանի պաշտպանությունը հուսալի դարձնելն էր և առհասարակ Չանգեզուրի արևելյան մատույցներից նրան հեռացնելը: Իսկ այդ խնդիրը կարելի էր կատարել Որոտան գետի ստորին հոսանքի՝ աղբրեջանաբնակ տարածքով անցնող Բարգյուշատի, երկու կողմերում գտնվող թուրքական գյուղերի տեղահանության միջոցով:

Ուստի Ձեյվան ազատելուց և Ղափանի շրջանից թշնամուն հետ շարտելուց հետո Նժդեհը կանգ չառավ, այլ մտնելով աղբրեջանաբնակ տարածքը՝ շարունակեց հետապնդել թուրքական զորամասերին: Նրա նպատակն էր մեջտեղից վերացնել Չանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնվող աղբրեջանական սեպը և այդպիսով կենդանի կապ ստեղծել երկու հայկական երկրամասերի՝ Չանգեզուրի և Արցախի միջև⁴³:

Այսպես սկսվեց **Բարգյուշատի** արշավանքը:

Թիկունքը սարերին տված՝ հայկական վաշտերը ապրիլի 1-ին հեղեղի մնան թափվեցին Բարգյուշատի (Որոտանի) թուրքական գյուղերի վրա:

Նուրի փաշայի և արքայազն, գնդապետ Ղաջարի զորքերը, կորցնելով իրենց բարոյական կորուվը, նահանջեցին դեպի Դոնդարլու և Խոջահան⁴⁴:

Ապրիլի 2-ի լուսաբացին հայկական վաշտերը շարունակեցին իրենց հանդուգն գրոհը: Թշնամու դիմադրությունը արագ կտրվեց, և նա, խոշոր կորուստներ

⁴⁰ Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 64 (տողատակ), **Ուլանի**՝ Հրամաններ, կոչեր, էջ 415-416:

⁴¹ Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 53:

⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 21, Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 63-64, Ստեմեկ, նշվ. աշխ., էջ 20-21, «Նժդեհ, կենսքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 100:

⁴³ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 63-64, «Նժդեհ, կենսքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 100, 428, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 53, Ռ. Համբարձումեան, նշվ. աշխ., էջ 61:

⁴⁴ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 64, «Նժդեհ, կենսքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 100, 102, 428, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 53:

կրելով, սկսեց մեկը մյուսի հետևից խուճապով թողնել գյուղերը: Հայկական զորքի ձեռքն անցան գերիներ, ձիեր, մեծ քանակությամբ հացահատիկ, ինչպես նաև հակառակորդի շտաբի արխիվը՝ կարևոր փաստաթղթերով, որոնցից հայտնի դարձավ, որ աղբրեջանական այս զորամասի մեջ նույնպես կան մեծ թվով օսմանցի սպաներ⁴⁵:

Կովի երրորդ օրը՝ ապրիլի 3-ին, վերջին կատաղի հարձակումով հայերը գրավում են Բարգյուշատի ձախ ափին փոված տարածքները⁴⁶:

Չանգեզուրի և Արցախի միջև ընկած աղբրեջանաբնակ տարածքի առաջին շարքը մաքրելուց հետո կովի ժամրոթյունը փոխադրվում է Ասկյուլում:

Իր ավագակարարո բնակչությամբ Ասկյուլումը երկար ժամանակ պատուհաս էր դարձել հայ բնակչության գլխին: Հարկ էր պատժել չարիքի այդ որջը, որքան էլ այն անտիկ էր իր դիրքով:

Ապրիլի 6-ին Նժդեհը հարձակման հրաման է տալիս և հայկական վաշտերը, բաժանված երկու թևի, գրոհում են Ասկյուլումը: Թուրքերն այստեղ նույնպես խուսափում են հայկական ուժերի հետ առճակատումից և արագորեն թողնում են գյուղը⁴⁷:

Ասկյուլումը և նրա շրջակա մի քանի բլուրները գրավելուց հետո հայկական զորքը, շարունակելով հարձակումը, նույն օրվա երեկոյան դեմ մտնում է Խոջահան գյուղը և կրակի մատնում տեղի հարուստ շուկան⁴⁸:

Այս ճակատը զորացնելու համար թուրքերը զգալի թվով օգնական ուժեր ստացան Ջեբրայիլից ու Ղարաղաղի պարսիկ խաներից և փորձեցին կանգնեցնել հայկական զորքի առաջխաղացումը: Բայց այդ բանը նրանց չհաջողվեց⁴⁹:

Շարունակելով հարձակումը՝ հայկական ուժերը ապրիլի 13-ին գրավում են Շուբյուրդարասի բարձունքը, սպա հարձակվում Չավնդուրի (Բարթազ) շրջանի վրա: Այս տարածքում հայ քաջորդիները կովում էին տասնապատկված եռանդով: Նժդեհը դարձյալ նրանց հետ էր և գրոհից առաջ հիշեցրել էր, որ Չավնդուրը նվիրական է ոչ միայն դափանցիների, այլև ողջ Չանգեզուրի համար, քանի որ այն ծննդավայրն է Թորոս իշխանի: Նժդեհի օրինակով ամեն մի մարտիկ իր հետ մի բուռ հող էր վերցնում նրա գերեզմանից: Հետագայում Նժդեհը վերհիշել է, որ դա հայ մարտիկներին նոր ոգի և նոր ուժ էր ներշնչում Չավնդուրը գրոհելիս: Շրջանը մաքրվեց թշնամուց, որը գլխակորույս փախչում էր տարբեր ուղղություներով⁵⁰:

Թավրիզի «Մինարեթ» հայկական թերթը այս հաղթության մասին գրում էր. «Գորիսեն կը հեռագրեն որ Ղափանի ուղղությամբ գործող թուրք ուժերու մեջ երևան է հանուած Ատրբեջանեն հետխոտն տիվիզիայի մասնակցությունը

⁴⁵ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 64 և տողատակ, **Վ. Գեորգեան**, ԵՂՎ. աշխ., էջ 53:

⁴⁶ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 64, «Նժդեհ, կեսնքն ու գործունեությունը, ճշխարհներ, վկայություններ», էջ 102, 428, **Վ. Գեորգեան**, ԵՂՎ. աշխ., էջ 54, **Ռ. Համբարձումեան**, ԵՂՎ. աշխ., էջ 61:

⁴⁷ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 65-66, **Վ. Գեորգեան**, ԵՂՎ. աշխ., էջ 54, **Ռ. Համբարձումեան**, ԵՂՎ. աշխ., էջ 61:

⁴⁸ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 66, **Վ. Գեորգեան**, ԵՂՎ. աշխ., էջ 54:

⁴⁹ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 67, «Նժդեհ, կեսնքն ու գործունեությունը, ճշխարհներ, վկայություններ», էջ 100, **Վ. Գեորգեան**, ԵՂՎ. աշխ., էջ 54, **Ռ. Համբարձումեան**, ԵՂՎ. աշխ., էջ 61, **Է. Չոիրարյան**, ԵՂՎ. աշխ., էջ 243:

⁵⁰ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից, էջ 66-69, **Վ. Գեորգեան**, ԵՂՎ. աշխ., էջ 54, **Ստեփանյան**, ԵՂՎ. աշխ., էջ 21, **Ռ. Համբարձումեան**, ԵՂՎ. աշխ., էջ 61:

Չանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնված հողամասը գրավեր են հայ գյուղացիները: Գրավում են նաև Դեմիրչիլար, Կուրաթլու, Դոնդարլու և Խաչմաս գյուղերը, մինչև Բարթազ»³¹:

Իսկ «Ազերբայջան» թերթը գրում էր. «Պառլամենտի անդամ Ջալիլ բեգ Սուլթանովը Ջերբայիլից պառլամենտին հեռագրում է, որ Չանգեզուրի հայերի վերջին հարձակումը սկսվել է մարտի 29-ին և վերջացել է ապրիլի 4-ին: Մահմեդական գյուղերը բոլորովին այրված են: Թալանից զերծ մնացած մահմեդականները փախել են Պարսկաստան: Պարսկաստանում մոտ 10.000 աղքեղացի թուրքեր մնացել են անօթևան և քաղցած: Բնակչությունը խուճապ սոսկումի է մատնված: Պարսիկները, փոխանակ օգնելու փախստականներին՝ նրանց կողոպտում են: Սուլթանովը ինքն էլ փախստականների մեջ է»³²:

Այսպիսով, Գողթանից վերադառնալուց հետո Ղափանի և Գեմվազի վաշտերը երկու շաբաթվա ընթացքում նոր փայլուն հաղթանակներ տարան՝ բազմապատկելով հայ զենքի փառքը:

Ճիշտ է, անխուսափելի անկումից Օրդուբադը փրկվել էր, բայց դրա փոխարեն Ղափանի և Գեմվազի սահմաններից այն կողմ հայկական ուժերը կատաղի հարձակումներով գրավել էին աղքեղական տասնյակ գյուղեր, վերցրել պատերազմական զենքեր, մեծ քանակությամբ ցորեն և ուզամամթեք:

1919 թ. նոյեմբերի կեսերից մինչև 1920 թ. ապրիլի կեսերը, յալինքն՝ հինգ ամիսների ընթացքում, Կապարգողթի վաշտերը, մուսավաթական զորքերին ջախջախիչ հարվածներ հասցնելով, անճանաչությամբ և խիզախությամբ հերոսական նոր էջեր գրեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ:

Չանգեզուրի 1918-1920 թթ. հերոսական կռիվների կազմակերպիչներից մեկը՝ Հովակիմ (Հովակ) Ստեփանյանը, տարիներ անց գրել է. «Քանի, քանի անգամ Սյունիքը կրկնեց հաղթական Ավարայրը: Քանի, քանի անգամ... թշնամու բանակները փորձեցին Արաքսի ջրերի մեջ խեղդել «նրա հպարտ ու անպարտ զավակներին», բայց միշտ էլ հազար դիակներ փոռելով մեր լեռների վրա, քաշվեցին հեռուները, Սյունիքի և հայ զենքի գուլքն անելու»³³:

Կապարգողթի զորքի փառահեղ հաղթանակների կոփողը Գարեգին Նժդեհն էր՝ իր ուզմագիտական հանճարով, կազմակերպական վիթխարի տաղանդով, գործողությունների վճռականությամբ, հայ ազգի ուժերի նկատմամբ անմար հավատով:

А. Г. СИМОНЯН - Гохтанский поход Гарегина Нжде. - С середины января 1920 года турецкие военные силы во главе с Эдиф беем и азербайджанские вооруженные банды, воспользовавшись тем, что Зангезурские боевые отряды не имели возможности быстро перебросить силы с правого берега реки Воротан против Ордубада, начали подготовку резни армянского населения Гохтана. Им удалось подвергнуть ужасающему погрому и резне несколько армянских населенных пунктов, в том числе процветающие поселки Верхний и Нижний Агулис.

³¹ «Միմարեք», թիվ 14, 23 ապրիլի 1920 թ., «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 95, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 56 (տողատակ):

³² Հ. Ստեփանեան, Յուշեր, Թեհրան, 1930, էջ 42, «Նժդեհ, կեանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 95, Վ. Գեորգեան, նշվ. աշխ., էջ 55 (տողատակ):

³³ Հ. Ստեփանեան, Յուշեր, էջ 42:

Несмотря на чрезвычайно трудные условия похода, армянские боевые силы под командованием Нжде преодолели тяжелейший горный перевал Капуджу-ха и 15 марта 1920 года спустились в Гохтан. 20 марта начался второй этап операции, в котором было занято подавляющее большинство сел (в количестве 36) Гохтана. Через два дня отряды окружили Ордубад. Однако город не был взят, так как азербайджанские военные формирования вторглись на территорию Капанского района Зангезура и Нжде был вынужден в срочном порядке отодвинуть свои силы в Зангезур для их ликвидации. Остановив наступление врага на села Капанского района и отбросив его назад, армянские силы самообороны провели контрнаступление и взяли под контроль азербайджанские села Баргушата, а также Аксюли и Бартаз. Этим они обеспечили тыл Капана и предотвратили новые наступления турецко-азербайджанских военных сил на Зангезур.